

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վարդան Այվազյանի, Գալուստ Սահակյանի, Արա Նռանյանի և Վարդան Բոստանջյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ ենթակետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների համաձայն ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը սահմանվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի համակարգի կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման վճարները կարգավորվում են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածով, ըստ որի պետական գրանցման, գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման

AJV-53-31

համար ծառայությունների դիմաց գանձվող վճարների չափը և ցանկը սահմանում է անշարժ գույքի պետական ռեգիստրը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ: Գտնում ենք, որ բարձրացված խնդրում իսկապես կա օրենսդրական բաց:

Սակայն հարկ ենք համարում նշել, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ներկայացված Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով ըստ էության ամբողջական լուծում չի տրվում առաջացող խնդիրներին և բացի դրանից, հաշվի առնելով, որ արդեն իսկ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում է գտնվում 2010 թվականի պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով սահմանված են կադաստրի համակարգի պահպանման ծախսերը, առաջարկվող փոփոխությունը կարող է կյանքի կոչվել լավագույն դեպքում 2011 թվականի հունվարի 1-ից, ուստի առաջարկվում է նախագծի քննարկումը մի քանի ամսով հետաձգել հարցին համակողմանի մոտեցում ցուցաբերելու և օրենսդրական փոփոխությունները փաթեթով ներկայացնելու համար՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները՝

«Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջի համաձայն հիմնարկը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Հիմնարկի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 36-րդ կետով սահմանված են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետական տուրքի դրույքաչափերը և նույն հոդվածով սահմանվում է նաև, որ 36-րդ կետով սահմանված պետական տուրքի դրույքաչափերը չեն ներառում ծառայությունների կամ գործողությունների կատարման հետ կապված ծախսերը:

Իրավունքների պետական գրանցման բուն գործառնությունն նախորդում է մի շարք գործողությունների իրականացում, որոնք իրենցից ներկայացնում են առանձին ծառայությունների

AJV-53-31

մատուցում (չափագրման (տեղագնման) աշխատանքներ, գրանցված գույքի և դրա նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, կամերալ աշխատանքներ և այլն), առանց որոնց անհնար է իրականացնել իրավունքների պետական գրանցման գործառույթը:

Գործող օրենսդրությամբ, մասնավորապես, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածով կարգավորվում են անշարժ գույքի պետական ռեգիստրի կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար անհրաժեշտ նշված ծառայությունների կատարման հետ կապված հարաբերությունները: Ներկայացված նախագծի ընդունման դեպքում բաց է մնում նշված ծառայությունների մատուցման ֆինանսական հարաբերությունների կարգավորումը, որը կարծում ենք կարող է լուծվել «Պետական կառավարչական հիմնարկների մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով: Այլապես առաջարկվող նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի տվյալ եկամուտները կնվազեն առնվազն երկու երրորդով, քանի որ պետական գրանցման, գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար վճարները ներկայումս գանձվում են գանձապետական համակարգում բացված՝ կենտրոնացված հատուկ հաշվին և հաշվառվում են որպես պետական բյուջետային մուտքեր և անշարժ գույքի պետական ռեգիստրի համակարգի կողմից իրականացվող բյուջետային ծախսային ծրագրերը և պահպանման տարեկան ծախսերը՝ համակարգի բյուջետային հայտը, կազմվում են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բյուջետային գործընթացի շրջանակներում և համակարգի պահպանման տարեկան ծախսերը հաստատվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի առանձին հավելվածով:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մրցունակության բացահայտում» հետազոտության արդյունքների համաձայն պետական կառավարման համակարգում կադաստրի համակարգի աշխատավարձը

AJV-53-31

գտնվում է համեմատաբար ցածր մակարդակի վրա և հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հանրապետության ամբողջ տարածքում համակարգից օգտվում է բնակչության զգալի մասը՝ ներկայումս գործող համակարգի ֆինանսավորման ընդհանուր գործընթացը հնարավորություն է տալիս կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների շրջանակներում նախատեսել աշխատողների խրախուսման ֆոնդ, որի գոյությունը ցածր աշխատավարձի պայմաններում հնարավորություն է տալիս ապահովել առանձին արժանավոր աշխատողների աշխատանքի առավել համարժեք փոխհատուցում, ինչպես նաև կասեցնել որակյալ մասնագետների հոսունությունը և այս ամենը ոչ միայն նպաստում է կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, այլև ապահովում է իրականացվող գործառնությունների համապատասխան որակ: Իսկ աշխատողների խրախուսման ֆոնդի վերացումը ոչ միայն չի նպաստի կոռուպցիոն ռիսկերի նվազմանը, այլ՝ ընդհակառակը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախագծի հեղինակներին առաջարկում է քննարկումը հետաձգել և համագործակցել կառավարության հետ նախագծի լրամշակման հարցում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մուսայանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին**

**Հոդված 1.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-295, 14 ապրիլի 1999թ.) 49-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

*«Հոդված 49. Պետական գրանցման ծառայությունների դիմաց վճարները եւ համակարգի ֆինանսավորումը*

Անշարժ գույքի պետական ռեգիստրի համակարգի կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման եւ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ծառայությունների դիմաց պետական բյուջե են գանձվում վճարներ, որոնց ցանկը եւ չափը սահմանվում է օրենքով:

Անշարժ գույքի պետական ռեգիստրի համակարգի կողմից իրականացվող ծրագրերի ու ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի եւ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:ե:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հունվարի 1-ից:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ Ե ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ Ե ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի առաջարկը բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջներից, համաձայն որի բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի եւ այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը: Բացի այդ, օրենքի ընդունումը կնվազեցնի կոռուպցիոն ռիսկերը նշված համակարգում, կավելացնի պետական բյուջեի եկամուտները, ինչպես նաեւ կբարձրացնի բյուջետային միջոցների ծախսման արդյունավետությունը:

Նկատի ունենալով վերը նշվածը, առաջարկում ենք օրենքով կարգավորել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման եւ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման վճարները, դրանց չափն ու վճարման կարգը,

ինչպես նաև նշված համակարգի ֆինանսավորումն ապահովել պետական բյուջեի միջոցների հաշվին: